ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1337 Թ. ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության, մասնավորապես՝ արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը խիստ կարևորվում է XIV դ. երկրորդ քառորդից, երբ հայկական թագավորության վիճակը գնալով էլ ավելի էր բարդանում:

Այս համատեքստում ուշագրավ խնդիր է Կիլիկյան Հայաստան–Եգիպտոսի սուլթանություն հարաբերությունների ուսումնասիրությունը, հատկապես՝ 1337 թ. պայմանագիրը, որը մինչև այժմ խորությամբ քննված չէ, և մի շարք հարցերի տրված չեն սպառիչ պատասխաններ: Հայտնի է, որ XIV դ. առաջին քառորդից հետո Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական իրավիճակը խիստ սրվել էր: Նախ՝ մի կողմից դադարել էր գործել հայ-մոնղոլական դաշինքը, իսկ մյուս կողմից էլ օր օրի հզորանում էին Եգիպտոսի սուլթանությունը և թուրքմեն-կարամանները, որոնք արդեն մի քանի անգամ անհանգստացրել էին հայկական թագավորությանը: Հարկ ենք համարում նաև նշել, որ հիշյալ ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքում, բացի Կիլիկիայի հայկական թագավորությունից, մնացել էր միայն մեկ քրիստոնյա պետություն՝ Կիպրոսի թագավորությունը, որը, սակայն, էական դեր չէր կարող խաղալ հայերին օգնելու գործում: Փոխարենը, Եգիպտոսի սուլթանությունից բացի, հայկական թագավորությանն արդեն սպառնում էին մահմեդական մի շարք այլ պետություններ ևս: Բացի այդ, XIV դ. երկրորդ քառորդից, ի վնաս Կիլիկիայի հայկական թագավորության, կտրուկ բարդացավ Արևմտյան Եվրոպայի քաղաքական վիճակը, և երկրորդ պլան մղվեցին խաչակրաց նոր արշավանքների ծրագրերը: 1335–1336 թթ. Եգիպտոսի սուլթանության հրահրումով Կիլիկիայի հայկական թագավորության դեմ արշավեցին Հալեպի սուլթան Ալթուն Բուղայի և թուրքմեն-կարամանների զորքերը[1]: Այդ արշավանքներից Կիլիկիայի հայկական թագավորությունը բավական տուժեց և ընկավ ծանր վիճակի մեջ, իսկ դրսից որևէ օգնություն չեղավ: Ստեղծված պայմաններում հայոց արքան ստիպված էր դիմել Եգիպտոսի սուլթանին՝ հաշտություն կնքելու նպատակով: Սկզբնական շրջանում սուլթանը չհամաձայնեց և նույնիսկ ձերբակալեց հայկական դիվանագիտության պատվիրակության

[1] *Սամուէլ Անեցի. Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 168, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1951, էջ 295, Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. Ա, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 88:*

անդամներին, միայն որոշ ժամանակ անց կնքվեց հաշտության վերոնշյալ պայմանագիրը:

Նախ, փորձենք պարզաբանել, թե ո՞ր թվականին է կնքվել Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև հաշտության պայմանագիրը:

Հարկ է նշել, որ XIV դ. երկրորդ քառորդից մինչև թագավորության անկումն ընկած ժամանակահատվածի մասին սկզբնաղբյուրներում տեղեկությունները շատ կցկտուր են, և այդ պատճառով բավականին բարդանում է խնդիրը: Այսպես՝ հայկական աղբյուրներից Սամվել Անեցին և XIII–XVIII դդ. ժամանակագիրները[2] նշում են թշնամու արշավանքների, հայկական տարածքների գրավման, մարդկանց գերեվարության մասին, սակայն որևէ տեղեկություն չեն հայտնում պայմանագրի կնքման թվականի վերաբերյալ[3]: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ևս այդ թվականի մասին վկայություններ չկան[4]: Բացառիկ կարևոր նշանակություն ունեցող տեղեկությունների ենք հանդիպում արաբական, մասնավորապես՝ Իբն-Իյասի արձանագրած նյութերում: Հեղինակը նշում է, որ 1337 թ. մայիսի 5-ին Այասը 3 օրով պաշարվեց, բայց շուտով հրաման եկավ վերադառնալ, քանի որ համաձայնություն էր կնքվել երկու կողմերի միջև[5]: Կարծում ենք, որ խոսքը հենց մեզ հետաքրքրող պայմանագրի կնքման մասին է: Այլապես դժվար թե թշնամու զորքերը հետ քաշվեին: Եվ եթե պատմիչի տեղեկությունը ստույգ է, ուրեմն պայմանագիրը կնքվել է հենց 1337 թվականին: Դրա մասին է վկայում նաև դեպքերի ժամանակակից Հեթում Ախտուց տիրոջ ժամանակագրությունը[6], որտեղ հստակ նշվում է, որ հայ-մամլուքյան պայմանագիրը կնքվել է հենց 1337 թ.: Եվ սա շատ արժանահավատ աղբյուր է, քանի որ դրա հեղինակն անձամբ մասնակցել է բանակցային գործընթացին: Դժբախտաբար, միջնադարյան մյուս աղբյուրներում խնդրիս կապակցությամբ չենք հանդիպել այլ տեղեկության:

Մի շարք գիտնականներ, որոնք խոսում են այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների մասին, ձեռնպահ են մնացել պայմանագրի կնքման թվականը նշելուց[7]: Իսկ ահա հայտնի հայագետ Ղ. Ալիշանն իր հռչակավոր «Սիսուան» աշխատության մեջ գրում է, որ երկու պետությունների միջև պայմանագիրը կնքվել է կա՛մ 1337, կա՛մ էլ 1338 թվականին[8]: Ցավոք, հեղինակը ցույց չի տալիս այն աղբյուրը, որից օգտվել է: 1338 թ. տարբերակը դժվար է ընդունել, քանի որ չունենք որևէ աղբյուրի հաղորդում այդ մասին: Հարկ է շեշտել, որ հետազոտողների

---

[2] *Մանր ժամանակագրություններ..., էջ 88:*

[3] *Ս ա մ ո ւ է լ Ա ն ե ց ի. Հաւաքմունք..., էջ 168:*

[4] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 295:*

[5] *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 287, ծնթ. 114:*

[6] *Ա. Մ ա թ ևո ս յ ա ն. Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները.– ՊԲՀ, 1963, -4, էջ 193:*

[7] *Կ. Մ ո ւ թ ա ֆ յ ա ն. Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 465, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 775:*

[8] *Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 392:*

մնացած մասը նշում է 1337 թ. տարբերակը, ինչպես, օրինակ, Մ. Չամչյանը[9], Մ. Օրմանյանը[10], Գ. Միքայելյանը[11], Ա. Սուքիասյանը[12] և Լ. Տեր-Պետրոսյանը[13]:

Այժմ տեսնենք, թե ինչ հաղորդումներ կան աղբյուրներում պայմանագրի բովանդակային դրույթների վերաբերյալ: Այսպես՝ սակավաթիվ աղբյուրներից, որտեղ խոսվում են այդ ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձերի և, մասնավորապես, 1337 թ. հայ-մամլուքյան պայմանագրի բովանդակային դրույթների մասին, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններն են, որոնցից մեկում նշվում է, որ հայոց արքան թշնամուն զիջեց Ջահանի բերդերն ու երկրները, ինչպես նաև Այասը[14], որը վիթխարի եկամուտներ էր ապահովում հայկական թագավորությանը. «Թագաւորն անճար կեցաւ ու կատարեաց զսուլտանին կամքն, ու երետ զոր կտրէր Ջահան բերդերովն ու զերկիրն ու զպանծալին այս Այաս, զոր բազում ծախիւք շինեալ էր»[15]: Ճիշտ է, այս հաղորդումը շատ կարևոր է պայմանագրի լուսաբանման համար, սակայն հստակ պատկերացում չի տալիս, թե որոնք էին Ջահան գետի բերդերն ու երկրները, և հատկապես՝ ո՞ր տարածքներն անցան թշնամուն: Տարածքային կորուստներից բացի՝ չկա այլ դրույթ: Հիշատակվող խնդրի շուրջ պարզաբանումներ է տալիս անանուն ժամանակագիրներից մեկը՝ նշելով, որ Եգիպտոսին էին անցնելու Այասը, Կովայրան, Համուսը[16] և մինչև Ջահան ընկած տարածքները. «ՉԼԶ (1337) առ անօրէն ազգն իսմայելի զԱյաս և զԿովառայ և զՀամուսն և զմինչ Ջահան կտրէ»[17]: Ինչպես նկատում ենք, ի տարբերություն ԺԴ դարի հայերեն ձեռագրի հիշատակարանի, ժամանակագրության հաղորդած վկայություններն ավելի որոշակի են դարձնում տարածքային զիջումների հարցը:

Ուսումնասիրվող խնդրի լուսաբանման համար շահեկան կարող են լինել նաև արաբական աղբյուրներում եղած տեղեկությունները, որտեղ նախ նշվում է, որ Եգիպտոսի սուլթանը, դաշնագրով կապված լինելով, չհարձակվեց Կիլիկյան Հայաստանի վրա, բայց թույլ տվեց այդ անել Հալեպի Ալթուն Բուղա էմիրին[18]: Շարունակելով իր միտքը՝ պատմիչը վկայում է, որ սուլթանին համաձայնագրով մնում էին Այասը, Ջահանի արևելյան հողամասը՝ իր բերդերով ու քաղաքներով, որոնց մեջ՝ Մսիսը, Համուդան, Կովեյրան, Հարունիան, Սարվանդիքարը, Փայասը, Նաջիման,

---

[9] *Մ. Չ ա մ չ յ ա ն ց. Հայոց Պատմություն, հ. գ, Երևան, 1984, էջ 337:*

[10] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, սյուն 2166:*

[11] *Գ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 464:*

[12] *Ա. Մ ո ւ ք ի ա ս յ ա ն. Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 92:*

[13] *Լ. Տ ե ր - Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2008, էջ 407:*

[14] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 295:*

[15] *Նույն տեղում:*

[16] *Վերը նշված բերդերի մասին տեղեկությունները տես՝ Մ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Կիլիկիան Հայաստանի բերդերն և բերդաքաղաքները, Վենետիկ, 1989:*

[17] *Մանր ժամանակագրություններ..., էջ 88:*

[18] *Արաբական աղբյուրները..., էջ 287, ծնթ. 114:*

Նողեյրը[19]: Իբն Իյաս պատմիչի տեղեկությունները հստակորեն ցույց են տալիս այն տարածքները, որոնք Կիլիկիայի հայկական թագավորությունը զիջեց Եգիպտոսի սուլթանությանը: Եվ այդ տեղեկությունները կարող են ճշմարիտ լինել, քանի որ թվարկված բոլոր տարածքները Ջահան գետի արևելյան տարածքի հողերն էին: Պետք է նաև նշել, որ թվարկվող տարածքների մասին հետագա տասնամյակներին մենք այլևս չենք հանդիպում որևէ այլ տեղեկության, ինչն էլ ենթադրում է հիշյալ աղբյուրի հաղորդման ճշմարտացիությունը:

Ուսումնասիրվող խնդրի շուրջ չափազանց արժեքավոր վկայության ենք հանդիպում դեպքերի ժամանակակից Հեթում Սխտուց տիրոջ ժամանակագրության մեջ, որտեղ հեղինակը նախ՝ հաստատում է, որ, իրոք, Ջահան գետի տարածքի բերդերն անցել են թշնամուն, ապա ավելացնում, որ նշյալ պայմանագրով Կիլիկյան Հայաստանը Կարամանյան պետությանն էլ զիջել է Դեղնքարը[20] և այլ բերդեր. «Ի թվին ՉՁԶ (1337) երեթ թագաւորն ի Հայոց երկրէն ի Մսրա սուլտանն ի Միլէք Նասրն՝ զՋահնայ այն դիհն իր բերդերովն ու երկրովն...: Եւ տվին ի խարամանն զԴեղնքարն այլ բերդեր այլ խլեցին»[21]: Այս եզակի տեղեկությունը միակն է հայկական և օտար աղբյուրների մեջ, որտեղ նշվում է, որ Կարամանյան պետությանը նույնպես զիջումներ են կատարվել, և հայկական բերդերից մի քանիսն անցել են կարամաններին: Ափսոս միայն, որ ժամանակագրի մոտ չեն պահպանվել նաև կարամաններին անցած մյուս տարածքների անվանումները՝ բացի Դեղնքարից: Հիշենք, որ Կարամանյան պետության զորքերը մշտապես օգնում էին Եգիպտոսի սուլթանությանը Կիլիկյան Հայաստանի դեմ պայքարում, և շատ բնական է, որ դաշնակցության դիմաց պետք է որոշակի փոխհատուցում ստանային: Մանրազնին հետազոտելով միջնադարյան մյուս աղբյուրները՝ ցավոք, չենք կարողացել գտնել որևէ այլ տեղեկություն, թե էլ ի՞նչ զիջումներ են կատարվել Կարամանյան պետությանը: Բացի այդ՝ միջնադարյան և ոչ մի աղբյուր մեզ չի տեղեկացնում, թե Կիլիկիայի հայկական թագավորությունը որքան ռազմատուգանք պետք է վճարեր Եգիպտոսի սուլթանությանը: Հարկ է նաև նկատել, որ միջնադարյան գրեթե բոլոր աղբյուրներում, որտեղ մշտապես խոսվում է ռազմաքաղաքական իրադարձությունների, տարածքային կորուստների մասին (ինչը, բնականաբար, ամենակարևորն է), չեն նշվում պայմանագրի բովանդակության մյուս գլխավոր դրույթները: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է առևտրատնտեսական հարաբերություններին, որից պետությունները մեծ եկամուտներ էին ստանում: Եվ հաճախ շատ պատերազմների մի մասը մղվում էր հենց տնտեսական խնդիրների համար:

---

[19] *Տե՛ս նույն տեղում:*

[20] *Դեղնքարը Լեռնային Կիլիկիայի բերդերից է. մանրամասն տես՝ Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 273, Մ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 94–95:*

[21] *Ա. Մաթևոսյան. նշվ. աշխ., էջ 193:*

Ղ. Ալիշանը[22], Կ. Մութաֆյանը[23] և Ա. Սուքիասյանը[24] նշում են, որ այդ պայմանագրով սուլթանն օգտվում էր Պիրամոսի (Ջահան) ողջ ձախ ափից, այդ թվում՝ Այաս հոյակապ քաղաքից՝ հայերին թողնելով միայն քաղաքի նավահանգիստը: Քննարկվող խնդրին անդրադարձել են նաև Ս. Բոռնազյանը[25], Գ. Միքայելյանը[26] և Լ. Տեր-Պետրոսյանը[27], որոնք, բացի Այասի կորստից, ավելացնում են և այն դրույթը, ըստ որի՝ հայոց արքան Ավետարանով երդվեց խզել իր բոլոր կապերը Հռոմի պապի և Ֆրանսիայի թագավորի հետ: Կարծում ենք, որ այդ փաստը նույնպես կարող էր լինել պայմանագրի բովանդակության մեջ, որովհետև Եգիպտոսի սուլթանությունը նախկինում մի քանի անգամ արդեն զգուշացրել էր հայկական թագավորության ղեկավարությանը, որ իր համար ցանկալի չէ, որ հայերը բանակցեն Արևմուտքի հետ, քանի որ դա չէր բխում Եգիպտոսի պետական շահերից: Ուսումնասիրվող խնդրին անդրադարձել է Մ. Օրմանյանը, որը, բացի հիշատակված դրույթներից, ավելացնում է, որ հայերը չպետք է գաղտնի գրագրություններ կատարեին և պահանջեին նոր խաչակրաց արշավանքներ, ինչպես նաև խզեին իրենց կապերը լատինների հետ[28]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով միջնադարյան սակավաթիվ աղբյուրների ընձեռած տեղեկությունները, ինչպես նաև գիտական գրականությունը՝ գալիս ենք այն եզրակացության, որ 1337 թ. Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի սուլթանության միջև կնքված հաշտության պայմանագրի բովանդակային դրույթները հիմնականում հետևյալն էին.

1. Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև դադարում էին ռազմական գործողությունները:

2. Կիլիկիայի հայկական թագավորությունը Եգիպտոսի սուլթանությանն էր հանձնելու Այաս քաղաքը, ինչպես նաև Ջահան գետից արևելք ընկած բերդերն ու քաղաքները՝ Մսիսը, Համուդան, Կովեյրան, Հարունիան, Սարվանդիքարը, Փայասը, Նաջիման, Նոդեյրը:

3. Հայկական թագավորությունը Կարամանյան պետությանն էր հանձնելու Դեղնքարը և մի շարք այլ բերդեր:

4. Կիլիկիայի հայոց արքան պարտավորվում էր այլևս պատվիրակություն չուղարկել Եվրոպա՝ օգնություն խնդրելու:

5. Լևոն Ե արքան պարտավորվում էր դադարեցնել բանակցություններն արևմտաեվրոպական երկրների միապետերի և Հռոմի պապի հետ՝ խաչակրաց նոր արշավանքներ կազմակերպելու հարցում:

6. Կիլիկյան Հայաստանի ղեկավարությունը հանձն էր առնում խզել կապերը լատինների հետ:

7. Եգիպտոսի սուլթանությունը պարտավորվեց, որ դաշնակիցները հանեն իրենց զորքերը Կիլիկյան Հայաստանի տարածքից և խոստացավ պայմանագրի

---

[22] *Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 392:*
[23] *Կ. Մ ո ւ թ ա ֆ յ ա ն. նշվ. աշխ., էջ 465:*
[24] *Ա. Ս ո ւ ք ի ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 92:*
[25] *Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 775:*
[26] *Գ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 465:*
[27] *Լ. Տ ե ր - Պ ե տ ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 407:*
[28] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., սյուն 2166–2167:*

բովանդակային կետերի կատարման պարագայում այլևս չպատերազմել հայերի դեմ:

8. Երկու պետությունների միջև հաստատվում էր խաղաղություն և բարեկամություն:

Ինչպես նկատում ենք, 1337 թ. կնքված պայմանագիրը բավականին թանկ նստեց հայկական թագավորության վրա, քանի որ հայերը զրկվեցին շատ կարևոր նշանակություն ունեցող տարածքներից, որոնց կորուստը լուրջ խնդիրներ էր առաջացնելու նաև երկրի տնտեսական կյանքում: Եվ այս հաշտության պայմանագիրը տարբերվում էր նախորդ պայմանագրերից նրանով, որ այս անգամ Եգիպտոսի սուլթանությանն ու Կարամանյան պետությանն անցան բազմաթիվ քաղաքներ և բերդեր, որոնք ունեին թե՛ ռազմավարական, թե՛ տնտեսական կարևոր նշանակություն: Այս առումով շատ դիպուկ է նկատել արաբ պատմիչ Իբն-Վարդին՝ նշելով, որ Կիլիկիայի հայկական թագավորությունն անհոգի մի դիակ էր դառնում՝ կորցնելով այդ երկրները[29]:

О ДОГОВОРЕ 1337 Г., ЗАКЛЮЧЕННОМ МЕЖДУ КИЛИКИЙСКИМ АРМЯНСКИМ ЦАРСТВОМ И ЕГИПЕТСКИМ СУЛТАНАТОМ

АРАМ ОГАНЕСЯН

Резюме

Главнейшими вопросами в политической жизни Киликийской Армении второй четверти XIV в. стали армяно-мамлюкские отношения и основное содержание договора, заключенного в 1337 г. Армянское царство, потерпев поражение от Египетского султаната и его союзников в 1335–1336 гг., было вынуждено заключить довольно тяжелый договор, согласно которому армяне имели большие территориальные потери. Помимо этого из редких источников явствует, что Армянское царство, кроме уступок в пользу Египетского султаната, сделало большие уступки и Курманскому государству. И после этих территориальных потерь Киликийское Армянское царство значительно ослабло и пало.

ON THE 1337 TREATY SIGNED BETWEEN CILICIAN ARMENIAN KINGDOM AND EGYPTIAN SULTANATE

ARAM HOVHANNISSYAN

Summary

The most important questions in the political life in Cilician Armenia of the second quarter of the 14th century were the Armenian-Mamluk relationships and the main contents touched on in the treaty signed in 1337. Suffering a defeat from the Egyptian Sultanate and its allies in 1335–1336 Armenian Kingdom had to sign a rather unfavorable treaty for the Armenians. Due to it the Armenians lost significant territories. Moreover, due to very unique sources the Armenians handed over lands not only to Egyptian Sultanate but also to Karan Country. This act favored the weakening of Cilician Armenian Kingdom and later its break-up.

[29] *Արաբական աղբյուրները..., էջ 287:*